


6305

ԻՍՅԱՆ

ԳՐԲԱՑ ԲՂԴՈ



891.92

Ն-63

ԳԵՏՀՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ 1931


-6 NOV 2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՄԱԳԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԴՐ. ԲԳ ՑԱԳԳԲ

ԳՐԲԱՑ ԲՂԴՈ



ԲՁ-ՇՏՈՋ

112 10
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՄԱԳԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳԵՏՏՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ 1931

1 1 007. 2013

96916

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

891.99

Ն-63


ԳՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՈՒՐԳ ԶԱԳԴՐ

ԳՐԲԱՑ ԲՂԴՈ

(ԱՐԵՎԵԼՅԱՆ ԿԵԲԱԹ)

22973-59



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1931 թ.

ՊԵՏՏՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՀՐԱՏ. 1535
ԳՐԱՌԵՊ. 6090 (Բ.)
ՊԱՏ. 1040
ՏՆՐԱԺ 3000



ԳՐԲԱՅ ԲՂԴՈ

(ԱՐԵՎԵԼՏԱՆ ՀԵՔԻԱՅ)

1

Լեռնալանջին ծուռ գմբեթով
Յեղինջածածկ մեծ վանք կա մի,
Վորի մասին այս հեքիաթով
Ժողովուրդն է պատմում հիմի:
«Սուրբ Բղդո» յե վանքը կոչվել,
Վոր թալանի հիմքն է յեղել.
Նրանով են յուզվել, ապրել
Հազար ու մի վարդապետներ:
«Սուրբ Բղդո» յե վանքը կոչվել,
Թալանել են ժողովրդին,
Ուխտավորի բերածներով
Յուզ են կապել իրենց փորին:
Ու յերբ յերկրում սովնաական
Մեր կարգերի փոթորիկով
Մըրկվել են դյուղ, գյուղական,
Վանքն է ծածկվել յեղինջներով:
Այժմ մոռաց սե հուշ է մի
Փլվածքներում մեր անցյալի
«Սուրբ Բղդոյի» այդ վանքը հիմի,
Վորը նյութն է այս հեքիաթի:

Կար մի գյուղում ծուլլ, ալարկոտ
 Մի հսկա մարդ հրեշաչափ.
 Փորը հսկա կոճղ եր յուղոտ,
 Շրթունքը կախ մի լոշաչափ:
 Կեսոր դառնար, նա կղարթներ,
 Հով տեղերում միշտ կպառկեր.
 Ու այդպես միշտ որ ու տարի
 Նրա գործը հոգան եր փորի:
 Գործ չգիտեր, վոր գործ աներ.
 Մանկությունից լափել գիտեր.
 Հայրն եր նրան խրատ տվել,
 Յերբ պիտ չքվեր այս աշխարհից,
 «Աշխատանքը՝ խեղճ անճարին,
 Կյանքը ու հացը՝ խեղճի տերին»:
 Հայրը տերն եր մի խանութի,
 Մեկ եր տալիս, քսան առնում,
 Քսան առնում, մեկ եր ջնջում.
 Ամբողջ կյանքում քեֆ եր անում,
 Հավր լափում, գինի կոնծում:
 Ու մի որ ել այնքան հարբեց,
 Վոր տեղով մեկ ընկավ, պարկեց.
 Են պառկելն եր, վոր նա պառկեց,
 Վեր չկացավ ել հավիտյան:
 Ու վորք մնաց հարուստ Բղդոն
 (Այդ հրեշը բերանամեծ),
 Փական դրավ դռան վրա,
 Իր անկողնում ընկավ, պառկեց:
 Զարթնեց, լափեց. լափեց, պառկեց.
 Ու մի որ ել, յերբ նա զարթնեց,

Բան չգտավ՝ առնի լափի:
 Տունը ծախեց հարեանին.
 Առած փողն ել նստեց, լափեց.
 Յերբ վերջացավ, մահակն առավ,
 Ճամպա ընկավ. դնաց՝ դռնի
 Մի տեղ, մի վայր, ուր կարող եր
 Առաջվա պես անդործ պառկել,
 Որն ի բունը քեֆեր սարքել:

Բղդոն սոված, Բղդոն ծարավ
 Վտոքեր ուներ, մի-մի գերան,
 Զեռքերը հաստ կոճղի նման,
 Փորը՝ յուղոտ, վոնց վոր ծառի
 Բունը հսկա. շրթունքը՝ կախ,
 Բերան ուներ՝ հորի բերան:
 Գործի համար անպետք եր նա:
 Գործ չեր ուզում, այլ թե միայն
 Մի հնարքով ձրի ապրուստ:

Ու, ասում են, են որերում
 Փեսացու յեն առել, ծախել:
 Առողջ Բղդոն ծախվեց փողին.
 Քառսուն տարվա մի պառավի,—
 Վոր հոգ ուներ, տուն ու մուլքեր,
 Փող ու իրեր,— ուղեց իր կին:
 Լափեց, պառկեց. դարթնեց, լափեց,
 Մինչև կնոջ փողն ել հատավ.
 Լափեց, պառկեց. դարթնեց, լափեց,

Մինչև վերջին մալն ել ծախեց .
 Մախեց, լախեց ու պառաւիկն
 եւ մի որ ել « մնաս բարոյ »
 Պետք է առեր, մահակն առներ,
 Ընկներ չորեր, նոր հնարքով
 Գտներ յուզող, հարուստ պատառ,
 Բայց պառավը մահակն առավ
 Ու Բղղոյի ճամպան փակեց .
 « Ծուն-անիրավ, ի՞նչ ես կարծում ,
 Հայկան մարդու, մի դյուղացու
 Նյութար մարդու աղջիկ եմ յես ,
 Առնես, թողնե՞ս : Մուլքս լախես ,
 Վերջն ել առես , վոր կին չեմ քեզ :
 Ես սհաթիս մուլքերս բեր ,
 Դեռ կերածիդ տոկոսն ել տուր ,
 Բեղնից ջահել յես մարդ կառնեմ ,
 Բեղնից ջահել յես մարդ կառնեմ ,
 Յերեք տարի կին եմ յեղել ,
 Դրա փողն ել տուր ու գնա ,
 Ուր վոր կուզես , թեկուզ Սողոմ ,
 Թեկուզ դժոխք : Ի՞նչ, ինձ խելառ .
 Ու պառաված կի՞ն ես կարծել :
 Բեզ պես ջահել տասը մարդու
 Ինձ ամուսին կառնեմ փողով :
 Թե ուզում ես ինձնից ջոկվել ,
 Փողերս բեր . թե չես բերի ,
 Դատարանին դանդառ կտամ ,
 Բեզ կփակեն տասը պատով ,
 Տասը շղթա վզիդ կառնեն ,
 Վոր քո տեղդ լա՞վ հասկանաս ,
 Ինձ թա՛յ չանես նաչար կնոջ-

Զունեվորի մի աղջկա :

« Վա՛յ, Սոնա ջան ինչ ես ասում ,
 Բեղնից ո՞վ ե ուզում փախչել :
 Համա եսպես կյանք չի լինի ,
 Սոված փորին ի՞նչ սեր , ի՞նչ կին .
 Թույլ տուր, գնամ . գուցե մի որ
 Բախտը ժպտա ու մի խանութ
 Յես ել բանամ , բեզ-սիրունիս
 Մոտս տանեմ . ապրենք , խնդանք ,
 Թե չե եսպես ելի մնանք ,
 Մահն ել մեզ մոտ հյուր կունենանք » :
 « Բեզ մի քայլ ել թույլ չեմ տա , վոր
 Տնից գնաս , ինձ հետ այստեղ
 Տանը մնա ու գործ արա » :
 « Այ կին , ի՞նչ գործ . նիհար չեմ , վոր
 Գոնե ծանր իրեր տանեմ
 Աբան-նրան ու փող առնեմ .
 Փող ել չունենք , ծառա վարձենք ,
 Վոր աշխատե ու մենք ուտենք :
 Դու, Սոնա ջան , թող , վոր գնամ ,
 Մի ապրուստի հնար գտնեմ » :
 « Ձե , չե ու չե . տանը մնա .
 Թե ուրիշ բան դու չես կարող
 Անիող անել , շատերի պես
 Տանը մնա , գրբաց դարձիր » :
 « Վա՛յ , վա՛յ , ա՛յ կին , ի՞նչ ես ասում ,
 Ո՞վ փող կտա քո գրբացին .
 Են ո՞վ ե գիժ , վոր հավատա
 Սրա-նրա սուտ խոսածին » :
 « Բո բանը չե . այսորվանից
 Զուռնա առնեմ , դյուղը մտնեմ .

Տես, քանի կին անսեր, անբախտ
 Մոտո՞ւ պիտ դան, վոտո՞ւ պաղնեն,
 Վոր աննամուս իրենց մարդկանց
 Մի հնարքով խելքի բերես.
 Քանի-քանի մայրեր հիմի
 Հեջ լուր չունեն հեռուներից,
 Վորի վորդին, զույրը, զեռին,
 Վորի հայրն է կամ յեղբայրը
 Այս քաղաքում, այն գործի մեջ,
 Լուր չեն ղրկում իրենց մասին.
 Թե մի պատառ հաց ունենան,
 Գլխապատառ քեզ կբերեն,
 Վոր գիր անես, վորդին դա տուն,
 Կամ աղջիկը զնա մարդու,
 Քեռին մի ուր նամակ ղրկե,
 Հետն ել մի քիչ փող կամ շորեր:
 Այսորվանից դու գրբայ ես.
 Խելքդ ժողովի, տեղդ նստիր
 Ու ամեն ինչ իրա կարգով
 Կկատարենք փառքով, պատվով:
 «Աստված սիրես, այ կին, թող ինձ,
 Ուղղւո՞ւ ես, վոր յախես բռնին
 Ու մի ուր ել ինձ քարկոծեն.
 Հեշտ բան հո չի սուտ խոսելը»:
 «Սուտ չես խոսի, մի վախենա.
 Թե ասածդ չկատարվի,
 Քեզնից դժգոհ մարդուն կասես.
 —Անհավատ ես, ու աստված քեզ
 Պատժեց ըր չար կասկածանքի,
 Յերկմտության խոսքի համար.

Իբրև պատիժ չուզեց նա, վոր
 Ասածներս ճիշտ դուրս գային:—
 Թե ասածդ ճիշտ դուրս յեկավ,
 —Իմաստուն ե, — պիտի ասեն.
 Դրա համար միտք մի արա»:

V

Ու Բղդոն այսպես դարձավ մի զրբաց.
 Հարսները ջահել բերում են նրան
 Յուզ, ձու և հավեր, իրենց ամբարից
 Գողացած ցորեն, գարի ու կորեկ,—
 Բերում են դյուղի հարսները մեկ-մեկ,
 Վոր իրենց բախտը—գալիքը պարզեն:
 Բղդոն խաբում է, մթերքներն առնում,
 Անմիտ, յերկդիմի խոսքեր է ասում.
 «Կասկածի մեջ ե, թե աղոթք անես
 Զերմեռանդ սրտով ու աստված զթա,
 Նոր ըր սիրածն ել քեզ չի մոռանա»:
 «Իմ դիրն ասում ե. ձեր Գևոն հիմի
 Սի շատ մուլթ տեղ ե. բանտում, թե
 զորքում,
 Դրա համար ել նամակ չի դրում,—
 Բայց դուցե հիմա հիվանդ ե խեղճը.
 Մակայն հույս կա, վոր իր վատ վիճակից
 Կաղատվի մի ուր, հարկավոր ե, վոր
 Աղոթք շատ անեք, փրկություն կա դեռ»:
 Բղդոն միշտ այսպես շատախոսում եր,
 Մոնայի տված դասերը սերտում,
 Թե ամեն անգամ ինչպիսի հարցին՝
 Ինչ պատասխան ե տալու հարցնողին:
 Ու դոհ է Սոնան հիմար Բղդոյի

Այդ նոր փեշակից: Ձե՞, հիմա կարդին
Մարգրիկ են դարձել: Տունն ու տեղը լի,
եւ կարիք ունե՞ն կյանքից տարակու:
Քանի աշխարհում կան տգետ մարդիկ,
Բղդոն ուտելու հաց ունի յուզոտ:

VI

Բայց արի ու տես. ամեն հաբեմունքի
Պատասխան տալը աշխարհ եւ հեշտ չի,
ի՞նչ անի Բղդոն, վո՞ր կրակն ընկնի,
Վոր իրա մոտն է յեկել մի հղի
Ամթխած խեղճ կին: Հինգ աղջիկ ունի.
Յեւ ամեն անգամ ծննդից հետո
Խռով նրանից ամուսինը չար
Յերկար ամիսներ չէր ուզում տեսնել
Կնոջ յերեսը, թե ինչո՞ւ յե նա
Միշտ աղջիկ բերում, ինչո՞ւ մի անգամ
տղա չի ծնում:
Ու յեկել է խեղճ կինը ամթխած՝
Ամուսնուց ծածուկ, կուան տակ պահած:
Մի կապոց ունի ընտիր իրերով.
Բերել է, վոր տա գրբաց Բղդոյին,
Գայիք որերի ցաւն իմանա.
Ով պիտի լինի ծնունդը նրա՝
աղջի՞կ, թե՞ տղա:
Եվարած Բղդոն ի՞նչ ասի հիմա:
Մի քանի որից ծնունդ պիտ լինի:
Տղա՞, թե՞ աղջիկ է, ե՞, ո՞վ կիմանա:
Բայց գրբաց Բղդոն պարտավոր է միշտ
Ամեն ինչ գիտնալ: «Աղջիկս, դեպի
Այն դուռը քայլիր» ու հլու կինը

Դեպ դուռն է քայլում: «Այժմ յետ դարձիր».
Գրբացի խոսքից կինը չվարած
Վերադառնում է, կանգնում գլխիկոք:
«Ի՞նչ պիտի ասե գրբացը հիմի».—

մտածում է նա:

«Աղջիկս, դիտե՞ս ինչ պիտի ասեմ.
Այստեղից, յերբ վոր դեպի դուռն անցար,
Քայլվածքդ հաստատ ասում եր, վոր դու
Տղա կունենաս, բայց յերբ յետ դարձար,
Աղջկա ձև կար ջո քայլվածքի մեջ:
Կասկածելի չէ. աղջի՞կ, թե՞ տղա
Պետք է ունենաս, բայց թե համառոտ
Ու աղոթք անես, դուցե թե աստված
Իր գթությունը փոք ջո վրա,
Տղա ունենաս»: Ամթխած հարսը
Բղդոյի փեշն է պազնում ու թողնում
Ձեռքի կապոցը նրա վրա՝ մոտ.
Նորից գլխիկոր նա դուրս է գնում՝
Նախկին կասկածի, նախկին հուսերի
Տանջող կսկիծը իր հոգնած սրտում:

VII

Լուրը տվին, վոր Չոբանենց
Հարսը հիմի, են, վոր կյանքում
Մանչ չէր ծնել, հինգ աղջկա
Մարդուց ատված մայր եր յեղել.—
Այս որերիս մեկ աղջիկ է
Ու մի մանչ է ծնել մի տեղ:
Քեֆ է յսոր Չոբանենց տան
Ու են քեֆին Բղդոն հիմի
Կարծեսում է ու հրհուում.

«Իենը դնաց, ասի՝ մանչ ե,
Դեսը յեկալ, ասի՝ աղջիկ.
Դու մի ասիր, աղջիկն ու մանչ
Միասին են աշխարհ գալու»:
Ծափ են զարնում, հուռա կանչում,
Հետն ել փրփուր գինի կոնծում.
«Ես խմում եմ քո կենացը,
Գրբաց Բղդո. քո սուրբ խոսքից
Թող անսպաս լինի աշխարհ:
Դու մեր հարսին վոր ճիշտ ասիր,
Մեր են դռան կապված յեղի
Տերն ես հիմի: Են իմ մանչի,
Վոր դեռ նոր ե աշխարհ յեկել,
Տերն ես հիմի: Յեղը տար քեզ,
Հալալ լինի ճիշտ խոսողին,
Մանչը թող մեզ, վոր մեծանա,

ծառադ լինի»:

Ու խմում են, հուռա կանչում,
Գրբաց Բղդոն ողն ե թռչում:
Եսպես նաղով, թուզով, շուքով
Քեֆ արեցին Չորանենց տան
Ու Բղդոյին ճամպու դրին,
Յեզն ել յետքից քշին, տարան:
«Վա՛, եսպիսի բա՛ն եք լսել,
Հղի կնոջը գրբացն ասի՞
Ծնելու յե մանչ, թե աղջիկ»:
«Ես մեր Բղդոն սուրբ ե յեղել»:
«Սուրբերից սուրբ ու գիտնական»:
Ու ես լուրը թռավ, անցավ,
Աշխարհով մին փովեց, մնաց.
«Ու գրբաց Բղդոն սուրբ ե հիմի

ու գիտնական»:

VIII

«Բղդո ախպեր, ոգնիր դու մեզ,
Ոխտը եչ ենը կորցրել մի տեղ.
Մեր տան գեղաց փռերի մեջ
Արածեցին ու ել չկան:
Հնար գտիր, գիր բաց արա,
Մեր եչերի տեղն ասա,
Գնանք բերենք, մինը տանք քեզ»:
Եսպես յեկան դեմի գյուղից
Յերկու ծեր մարդ—իրար յեղբայր,
Շվար յեկան Բղդոյի մոտ,
Վոնց վոր սուրբի մի սուրբ վանքում,
Աղաչում են ու պաղատում.
«Բղդո ախպեր, խղճա դու մեզ,
Ոխտը հատ են, ոխտը սիրուն
Եչ ու քուռակ. յերկու որ ե
Տուն չեն դարձել. Հայիր—չիման,
Տեղ չթողինք. մոտիկ գեղեր
Մարդ ղրկեցինք. հետքը տարան,
Հասան մինչև դեմի սարին,
Քաղքի ճամպում մոլորվեցին:
—Ել հետք չկա.— ասին, դարձան»:
«Վոր եղպես ե, ամեն մեկդ
Թող վոր ոխտը լոչ հաց առնե,
Քաղքի ճամպան նորից բռնե.
Մինչև ձեռի հացը հատնի,
Ով հավատա, նա կգտնի»:
Եսպես խոսեց գրբաց Բղդոն,
Առավ, ձեռքի գիրքը փակեց—
Կեսը մաշած, կեսն ել փտած
Կաշով պատած Եֆեմվերդին:

IX

Իս ծերերը յոթ-յոթ լույ հաց
Հետներն առած համապա ընկան:
Հացն են կրծում ու աչք անում,
Թող չուտ հասնի, փոք եղերի

տեղը դանին:

Եսպես չվար ու մոլորած,
Մինչև հասան քաղաքը հին,
Ել ձեռքերում յոչ հաց չկար.
Մեկ էլ տեսան քաղաքի մոտ

դեմի դաշտում

Ել ու իշուկ, ճիշտ յոթը հատ,
Իրենց համար խոտ են ուտում.
«Սուրբ և յեղեյ դրբաց Բղդոն.
Քիչ և մեկը, յերկուսը տանք,
Թող մեկ համար աղոթք անե,
Մեր եղերին դեկ չտանե»:

X

Եսպես նրանք ուրախ-ուրախ
Եղերի հետ վերադարձան:
Ու յերբ մի ուր յերկու եղավ
Յեկան, թողին բազում, հետո
Բղդոյի մոտ մտան չտապ.

Բղդոն չեվար

Կասկածում եր, թե եղերը
Ի՞նչ չեն գտնված, ու չգիտեր
Թե ինչ ասեր այդ ծերերին:
Յերբ խմացավ յերբը գործի,
Իրեն բերված գուլյղ եղերի

Ձախիցն անցնող դովըն էլ լսեց,
Վերադեք թոռվ ու սուրբ դարձավ,
Պարզեքերն այնպես տոռվ,
Վոնց մի «չնչին» մի «հողու վարձ»—
«Աղոթքների», «ծոմի» համար:

XI

Հարուստ և Բղդոն, ամեն խեղճ

«Մարդուկ»

Թեթև գործերով (կամ չնչին վարձով)
Ձի կարող դանել Բղդոյին հիմա.
Նա ժամեր ունի վորոշված ու ճիշտ.
Միշտ այդ ժամերին իր չաղ հյուրերից
Պարպե և առնում, խորհուրդներ տալիս:
Տուն ու տեղ ունի, ծառաներ ունի,
Հացով լի ամբար ու կթան կովեր,
Մտաններ ունի ընտիր գինով լի.
Ի՞նչ կարիք ունի ամեն «գյաղայի»
Տված չոր հացի պատառի համար

դեռ սուտ էլ խոսի:

Նրա ստերը լսելու համար
Յեղ և հարկավոր, կով, գոմեշ կամ ձի:
Եսպես սուրբ Բղդոն իր դուռը փակեց
Չնչին վարձ տվող հյուրերի առաջ.
Թող մի յեղ բերի, մի գորգ, մի կարպետ,
Դուռը կրացվի և նրա առաջ:
Ու ամեն անգամ նեղն ընկած ժամին
Վերջին յեղն առած պարզե և բերում
Բղդոյի համար. «Վողորմած» Բղդոն,
Թե իր ասածը ճիշտ եր դուռն զալիս,
Շերկորոզ պարզեի պահանջն եր դնում,

Իսկ թե ի՞նչ սուտը բռնվում եր հանկարծ .
 Հիասկածեցիր դու, անխիղճ, անհավատ,
 Դու արժանի չես քո ցանկացածին .
 Կասկածիդ համար աստված քեզ պատժեց .
 Ճշում եր, գոռում : Ձե՞, ամեն սուրբ ել
 Այսպես եր անում . Բղդոն ինչո՞վ եր

սրբերից պակաս :

«Ա՛յ, Բղդո ակալեր, ի՞նչ ճիշտ խնայար,
 Ա՛յ, այս իմ հիմար աչքս քոռանա,
 Կասկածում եյի ասածիդ վրա :
 Յես եմ մեղավոր, դու ճիշտ ես ասում :
 Հիմար խարվածն եր մրմնջում նրան :

XII

Ես Բղդոյի լուրը հասավ
 Մի քաղաքից մյուս քաղաք,
 Ու մի իշխան, — վոր շատ հեռվում,
 Քաղաքից դուրս իր դշակում
 Մի որ զարթնեց ու մատանին
 Տեսավ կորած, — մարդ ուղարկեց,
 Վոր Բղդոյին առնու՜մբուր
 Բերեն իր մոտ, գիր բաց անի,
 Իր մատանու գողը գտնի :
 Դու մի ասիր, հենց գողին եր
 Բղդոյի մոտ դրկում ենպես .
 Գողն ել գիտեր «սուրբ» Բղդոյին
 Ու իր վախից նա քարացած
 Յեկավ, չոքեց նրա առաջ :
 «Ով սուրբ Բղդո, լսիր դու ինձ,
 Տառ տարի հավատարիմ
 Գամիւռի նման ծառայել եմ

22973 - 59

Իմ իշխանին, մազ չի պակսել
 Նրա դլխից : Բայց թե մի որ,
 Ինչ կասես վոր, նամակ բերին
 Մեր տանեցուց, եղ նամակում
 Գրված եր, վոր շատ հիվանդ ե
 Իմ մեծ վորդին : Դես ման յեկա,
 Դես ման յեկա, աչքս ընկավ
 Իմ իշխանի մի մատանին .
 Ուսի տանեմ, քաղքում ծախեմ,
 Ու վեր առա, ինձ մոտ տարա :
 Ո՛ր, սուրբ Բղդո, դու ինձ խղճա,
 Հավատում եմ, վոր թե գայիր,
 Պիտի անշուշտ խմանայիր,
 Վոր մատանին յես եմ պահել .
 Դրա համար խնդրում եմ քեզ,
 Վոր գաս ինձ հետ իշխանի մոտ,
 Մի հնարքով ինձ ազատես :
 «Այդ բոլորը յես յերազիր
 Յերեկ տեսա ու գիտեյի,
 Վոր դու այսօր քո իշխանից
 պիտ գաս ինձ մոտ» :

Ու ծառայից Բղդոն լսեց,
 Վոր իշխանի բակում հինգ հատ
 Ճերմակ փետուր ու մի հատ ել
 Դեղնափետուր որդե՛ն ապրում .
 «Դու խմորում ես մատանին
 Դեղին սագին տուր, Թող կուլ տա,
 Յես ել կասեմ, վոր մատանու
 Գողը բակի ձեղին սակն ե
 Թող իշխանի սագին մորթա
 Մատանին խմոր :



XIII

Սեփն, արին. սաղը բերին
 Ու մորթեցին, և մատանին
 դուրս հանեցին:
 «Բղդոն իօկ վար սուրբ ե». ասին:
 Ու իշխանն ել ամեն քեֆի,
 Ամեն մի տան սրան, նրան
 Գովքն եր անում «սուրբ» Բղդոյի:

XIV

Բղդոն դարձավ հարուստների,
 Համփա մարդկանց շատ սիրելին.
 «Բղդո», պատմիր ժողովրդին,
 Վոր յերազ ես տեսել մի շար.
 Թե հարկ չտան խան-բեկերին,
 Պիտի ջնջվի աշխարհն արար.
 Մենք ել քեզ հս սուրբ ենք դարձրել,
 Քեզ թե-թիկունք պատրաստ կանգնել:
 Դու մեր ոգտին մի քիչ խոսիր,
 Նրանից յետ, ում վոր կուզես,
 Սաղերի պես առ ու փետրեր,
 Վողջ աշխարհն ենք տալիս մենք քեզ»:
 «Հիմարներին յես դաս կտամ,
 Մի վախենաք, հարգելիներ,
 Յերազներով խրատ կտամ,
 Վոր վճարեն հարկ ու տարֆեր»:
 Ու ամեն որ դրանից յետ
 Նա կանգնում եր գյուղամիջում,
 Ու հալաքված շուրջը մարդկանց
 Բարոգում եր և խրատում.

«Թե աղքատ ես, դիտցիր, վոր դու
 Կամ քո պապը մի շար դարձ եք
 Դարձել կյանքում, ու աստված ել
 Քեզ աղքատ և դարձրել այդպես:
 Տեսած սարի չափովն ե միշտ
 Աստված իրա ձյունը դարկում,
 Ել ինչի՞ յեն քո դարդն ու վիշտ,
 Ի՞նչ ես բախտիդ դեմը կովում:
 Հարուստը միշտ աստուծով ե
 Հարուստ, գիտցիր, ու նրա դեմ՝
 Թեկուզ որդդ մի սե ծով ե՝
 Դու քո կյանքում հեչ մի կովիր:
 Հարկ պիտի տաս, տուր, վճարիր,—
 Չբարկանա աստված մեկ ել,
 Թե չե՝ հա կաց, հա ծառս յեղիր,
 Չի լսելու աստված քեզ ել»:
 Այսպես Բղդոն դարձավ բոլոր
 Համփա մարդկանց թե՛ն ու պաշտպան,
 Հարուստներն ել նրա անուն
 Դարձրին անմեռ ու սրբազան:

XV

Ու լուր բերին Թազավորին.
 «Արքունական գանձարանդ
 Կողոպտել են անհայտ մարդիկ,
 Քառսուն ջորուն բարձած վռոկին
 Տարել են քո մեծ քաղաքից»:
 Լուր բերին, հետո ասին,
 Վոր «Բղդոյից բացի վաչ-վաչ
 Չի կաբենա գանձի գողին»:

Յեկավ Բղդոն կյանքից խռով,
 Մեռելի պես գունատ, տրտում.
 Թագավորի առաջ կանգնեց:
 «Լսիր, Բղդո, թե չես ասի
 Տեղը գողի, կախաղանն է
 Բաժինը քո. թե ասել ես,
 Գանձի կեսը քեզ եմ տալիս»:
 Ու կամեցավ Բղդոն ելի
 Մի քանի որ ապրի կյանքում.
 «Մեծ թագավոր, մի բարկանա,
 Խնդրում եմ քեզ, քառասուն որ
 Ժամանակ տուր, դնամ, փակվեմ
 Տանս, յերկար աղոթք անեմ
 Յեվ աստուծով գողիդ բռնեմ,
 Վոր իմ կյանքը դու աղատես»:
 «Լավ, տալիս եմ. քառասուն որից
 Թե դու չեկար ու գողերին
 Թե չգտար, հրամանս
 Այսոր կասեմ, թող դիտատեն
 Դեզ իմ բաղում, աչքիս առաջ»:

Բղդոն չգիտեր վոչ թիվ, վոչ տարի
 Յեվ վախենում էր որվա հաշիվը
 Մտահան անի: Գնաց շուկայից
 Բառսուն ձմերուկ գնեց ու բերավ.
 Ամեն իրիկուն մեկն անուշ անե
 Ու, յերբ վերջինն ել ուտե, իմանա,
 Վոր պարտավոր է դահճի մոտ գնալ:

Ո՞վ չգիտեր «սուրբ» Բղդոյին.
 Արքունական գանձարանի
 Բառսուն գողն ել լսել եյին,
 Վոր «սուրբ» Բղդոն քառասուն որով
 Պայման կասել, տանն է փակվել.
 Վորոչեցին. մարդ ուղարկեն,
 Վոր դռան մոտ կանգնե, լսե,
 Թե «սուրբ Բղդոն ի՞նչ պիտ ասե»:

Իրիկուն եր. Բղդոն դալուկ
 Նստած եր դեռ իր կնոջ հետ,
 Յերբ գողերից մեկը յեկավ:
 Մտքի անտակ ծովն ընկած,
 Գունատ Բղդոն մահից փախած,
 Նշան արավ, կինը գնաց
 Մի ձեռքով լերավ, ուտե.
 Ու, տեսնելով ձմերուկը,
 Բղդոն ճչաց.
 «Կին, քոռանառ. ի՞նչ պիտ անենք,
 Բառսունից մեկը յեկավ»:
 Գողը լսեց, կարծեց՝ Բղդոն
 Իր մասին է այսպես խոսում,
 Լեղապատառ փախավ, գնաց:
 Փախավ, դնաց, պատմեց խմբին
 Բոլոր հասածն իր ակտնջին:
 Չհավատաց խումբը նրան.
 «Վաղը քեզ հետ թող, վոր դնա
 Մի ուրիշն ել. տեսնենք, թե նա
 Ի՞նչ պիտ ասե այն ժամանակ»:

XX

Ու յերկուան ել յեկան մութով,
 Դուան յետև սուս կանգնեցին.
 Ելի Բղդոն՝ որն ավարտած՝
 Նշան արավ, կինը բերեց .
 Մի ձմերուկ, նստեն, ուտեն.
 Բղդոն՝ մահվան վախը սրտում՝
 Կախաղանն է անվերջ տեսնում,
 Շնչում է նա սարսափած .
 «Կին, բոռանաս, ի՞նչ պիտ անենք.
 Քառասունից յերկուան եկան»:
 Ու յերկուան ել, կարծելով թե
 Բղդոն այնպես շնչում է
 Իրենց մասին, թողին, փախան:
 Լեղապատառ յերբ տեղ հասան,
 Այս բոլորն իրա կարգով
 Լավ պատմեցին, դեռ մի բան ել
 Վրան զարկին, թե՛ քիչ մնաց՝
 Բղդոն իրենց ներս պիտ կանչեր,
 Չերբակալեր ու բանտ քչեր:
 Խմբապետը՝ փորձված մի գող՝
 Չհավատաց այս անգամն ել.
 «Վաղն իրկվանց ձեզ հետ պիտ դամ,
 Տեսնենք հիմա ի՞նչ պիտ տես»:

XXI

Կինը նորից մի ձմերուկ
 Բերավ, ուտեն,—Բղդոն ճչաց.
 «Կին, բոռանաս, ի՞նչ պիտ անենք,
 Քառասունից յերեքն եկան»:

Այս վոր լսին, դողերը խեղճ
 Լեղապատառ պիտ փախչեցին.
 Խմբապետը փորձված գող եր.

«Կայեք», ասավ.

«Մենք ներս մտնենք Բղդոյի մոտ,
 Մեր արածը պատմենք մեկ-մեկ,
 Նրա տոջն մեկ տեղ չոքենք

Ու աղաչենք.

Թե նա սուրբ է, պիտի խղճա,
 Մի հնարքով պիտ ազատե
 Քառասունիս»:

Ու ներս մտան:

XXII

Բղդոն լուռ-մուռ լսեց նրանց,
 Հետո ուրախ ճչաց հանկարծ.
 «Յես գիտեյի, վոր դուք եյիք
 Արքունական գանձարանը
 Խարել ձեզ հետ.

Ուզում եյի, վոր դուք գայիք
 Մեկ-մեկ այդպես, ամբողջ խմբով,
 Ասածներս լավ լսեյիք,
 Համոզվեյիք, վոր ամեն բան
 Հայտնի յե միշտ ինձ—Բղդոյիս.
 Տարեք», ասավ, «մոսկիները
 Քաղաքից դուրս դաշտի վրա
 Ձորիններին բարձած թողեք.
 Դուք ել հեռվում պահակ դրեք,
 Չգողանան ուրիշ մարդիկ.
 Յես վաղն եմ թ պալատ կերթամ
 Ու կազատեմ ձեզ բոլորիդ»:

Ուրախ ե Սոնան, վոր դանձարանի
 Կեսին տիրացան: «Սրբազան» Բղղոն
 Դժգոհ ե սակայն. «Ի՞նչ, դու կարծում ես,
 Վոր ամեն անգամ պիտի կարենամ՝
 Կյանքս ազատել արքայի ձեռքից:
 Սա պատահական բախտ եր, վոր վերկեց
 Ինձ կախաղանից: Սակայն աշխարհի
 Գողերն անպակաս. ո՞վ գիտե, թե ինչ
 Կսարքեն վաղը նրանք ինձ համար:
 Ի՞նչ պիտի ասեմ յես այն ժամանակ.
 Լուռ-մուռ պիտ կանգնեմ, չե՞, դահճի
 առաջ.

Ավելի լավ ե, յես ինքս գիտեմ,
 Թե ինչպես վերջ տամ իմ այս տե կյանքին»:

Մի որ Բղղոն յելավ, գնաց,
 Վոր բաղնիսի լողարանում
 Իր մի թևից արյուն բանա,
 Տաք ջրի մեջ մեղմ մահանա:
 Մեկ ել տեսավ՝ Թագավորի
 Մարդիկ կանգնած բաղնիսի մոտ.
 Չուղին թողնել, վոր ներս մտնե,
 Բայց նա զոռով ներս սլացավ,
 Լողարանը մտավ, տեսավ,
 Արքան դեռ մերկ լողանում ե:
 Գրկեց նրան, փողոց հանեց,
 Վոր անպատիվ լինի արքան
 Լողարանից մերկ դուրս հանված,

Իր կեռ թրի մի հարվածով
 Խեղճ Բղղոյի կյանքին վերջ տա:
 Բայց, յերբ վոր նա՝ արքան ուսած՝
 Դուրս եր գալիս բաղնիքից,
 Խարխուլ պատը փլվեց հիմքից,
 Լողարանը բերնե բերան
 Լցվեց ցելով, քարով, ջրով:
 Ես վոր տեսավ, Թագավորը
 Կարծեց՝ Բղղոն վաղուց գիտեր,
 Վոր այդ ժամին պատը հանկարծ
 Պիտի փլվեր, ու յեկել եր,
 Վոր ազատե Թագավորին:
 Յեվ մերկ արքան գրկեց հուզված
 «Սուրբ» Բղղոյին, այսպես ասաց.
 «Պայծառափայլ, դու սուրբ Բղղո՞,
 Այսօրվանից իմ պալատի
 Մեծ իշխանն ես: Յես—Հոգեւոր,
 Հլու ծառադ. Պատրաստ եմ միշտ
 Նեցուկ լինել քո անունին»:

Թագավորին հետո պարզվեց,
 Վոր ստախոս մարդ ե Բղղոն,
 Բայց նրանից ոգտվել ուզեց,
 Նրան հանձնեց մի մեծ պաշտոն:
 Յեկեղեցու պետն եր Բղղոն
 Յեվ իշխան եր մի հարգեւոր,
 Ու թե լիներ Ժողով, մեծ տոն,
 Բղղոն պետք ե խոսեր եղ որ:
 Ժողովրդին քարոզ պիտ տար,
 Վոր միշտ լսեն Թագավորին.

Հլու քինեն և անդադար
 Հարկ վճարեն նրան, զորքին:
 «Տիրոջ ոճյալ մեր մեծ արքան
 Սովորական մարդ է, գիտցեք,
 Աստված նրան միշտ պահապան՝
 Նա ձեր կյանքի տերն է, գիտցեք:
 Ով վոր ընկնի նրա ձեռքով,
 Նա դժոխքի փայ կդառնա,—
 Ով պաշտպանի նրան կյանքով,
 Դրախտարժան մարդ կդառնա:
 Ձեր մեջ, դիտեմ, կան չար մարդիկ,
 Թաղավորի դեմ են յելնում:
 Հեշ չլսեք, թե չե՝ սաստիկ
 Սով կլինի, ցավ ու զուլում»:
 Հետո յերկար նա պատմում էր,
 Թե յերազ և տեսել միթամ,
 Ֆզ խոսքերն ել հենց աստված էր
 Իրեն ասել յերազներում:
 Ժողովուրդն ել հավատում էր
 Եղ ստախոս «սուրբ» Բղդոյին,
 Նրա խոսքը կատարում էր,—
 Ծառայում էր թաղավորին:
 Ու թե խիզախ մի մարդ յելներ,
 Խոսեր եղ սուտ Բղդոյի դեմ,
 Կախաղանը միշտ բաժինն էր,
 Պիտի մեռներ հենց տեղնուտեղ:

XXVI


Ասոր-փառոք Բղդոն այսպես
 Սուտ խոսելով շատ տարիներ
 Ապրեց անհող. վերջն ել նրան

(Յերբ նա մեռավ) յեկեղեցին
 Սուրբ հռչակեց. նրա անվան
 Մի մեծ վանքում լի հավատով
 Մշտթում էր ամեն մի մարդ,
 Ով կյանք չուներ, խեղճ էր դժբախտ:

XXVII

Ամեն մի սուրբ՝ Բղդոյի պես՝
 Անգործ ու ծուլ մարդ է յեղել,
 Հարուստ մարդկանց պաշտպանությամբ
 Սուտ խոսելով սուրբ է դառել.
 Են ո՞վ է զիժ, գնա հիմի
 Սուրբերի մոտ ապրի՛ք անի:





ԳԻՆԸ 30 ԿՈՊ. (1 մասնուկ)



Դր. Ներսիսյան
Гадальщик Бгдо
Госиздат ССР Армении
Эривань 1931

ՀՀ Ազգային գրադարան



NL0347575

ԳԻՆԸ 30 ԿՈՊ. (1 մանր)

46416



Եր. Ուրսիսյան
Գադալշիկ Բգժ
Գոսիզդատ ՀՍՀ Արմենի
Էրևան 1931

157